ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2013թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՅԳԻ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ հոդվածների, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12–րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3–րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Երևան քաղաքի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հ. Թոքմաջյանի առաջարկությանը՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի և Ջրաշխարհի հարևանությամբ տեղակայված զբոսայգու (այսուհետ՝ այգի) մասը՝ 5.637 հա մակերեսով (հատակագիծը կցվում է) բարեկարգելու և կանաչապատելու վերաբերյալ:

2. Երևան քաղաքի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հ. Թոքմաջյանի առաջարկության համաձայն մշակվող բարեկարգման և կանաչապատման նախագծա–նախահաշվային փաստաթղթերն ընդունել որպես նվեր:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել սույն որոշման 2-րդ կետում նշված նվերը և նվերն ընդունելուց հետո Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել այգու բարեկարգման և կանաչապատման համար անհրաժեշտ ծախսերի իրականացման հարցը:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու
«Հանրապետական կուսակցություն»
խմբակցության անդամ **Հ. Թոքմաջյան**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԱՅԳԻ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» 27 ապրիլի 2006 թվականի N 729–Ն որոշմամբ Երևան քաղաքի վարչական տարածքի սահմաններում բնակավայրերի նպատակային նշանակության հողերից, համապատասխանաբար առանձնացվել են տարբեր չափերի մակերեսներով հողատարածքներ և ըստ նպատակային նշանակության դասակարգել, որպես հատուկ պահպանվող տարածքների հողեր: Նոր–Նորք համայնքում առանձնացվել են 120.000 ք.մ. մակերեսով նման հողոտարածքներ, որի մեջ ընդգրկվել է Գայի պողոտայի և Ջրաշխարհի հարևանությամբ տեղակայված զբոսայգու 5,637 հա տարածքը: Նշված այգին այսօր լիարժեք չի ծառայում բնակչության հանգստի կազմակերպմանը և անհրաժեշտություն է այն բարեկարգել, դարձնել բնակչության կողմից պահանջարկ ունեցող հանգստի գոտի:

Այգու վերականգնման և բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակումը Երևան քաղաքին նվիրատվության կարգով կկատարվի մինչև 2014 թվականի հունվարի 31–ը: Ըստ նախագծի այգու բարեկարգման ու կանաչապատման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ենթակա է կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երևանի ավագանու կողմից ներկա որոշման նախագիծը ընդունվելու դեպքում մայրաքաղաքում կունենանք ևս մեկ բարեկարգ զբոսայգի բնակչության հանգստի կազմակերպման համար:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու
«Հանրապետական կուսակցություն»
խմբակցության անդամ **Հ. Թոքմաջյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու «Այգի բարեկարգելու և կանաչապատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին:

Երևան քաղաքի ավագանու «Այգի բարեկարգելու և կանաչապատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2013 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն կատարվում:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու
«Հանրապետական կուսակցություն»
խմբակցության անդամ **Հ. Թոքմաջյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու «Այգի բարեկարգելու և կանաչապատելու մասին» որոշման նախագծի առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին:

Երևան քաղաքի ավագանու «Այգի բարեկարգելու և կանաչապատելու մասին» որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու
«Հանրապետական կուսակցություն»
խմբակցության անդամ **Հ. Թոքմաջյան**


65055.0
56730.0